Հովհաննես Թումանյան

Աղավնու վանքը

(Ազգային ավանդություն)

Լենկթեմուրն եկավ, հուրն ու սուրն եկավ,
Անօրենն եկավ, եկա՜վ ու եկա՜վ.
Հավաքեց, կիտեց մեր ազգը Հայոց,
Փաթաթեց, պատեց, ինչպես վիշապ-օձ,

Կանգնեց Սևանա ափին հովասուն,
Էնտեղ, ուր ուշքը ու միտքն աստրծուն՝
Անհունն է խորհում, մեռնեմ իր զորքին,
Օհաննա վանքը ծովի եզերքին:
Էն վանքում, հայոց ազգին պահապան,

Աղոթք էր անում ծերուկ հայր Օհան.
Աղոթք էր անում իր հոգու համար,
Իր ազգի համար, աշխարհքի համար:
Երբ տեսավ խաղաղ վանքիցը իրեն
Անօրեն մարդու էս գործն անօրեն,

Խրոովեց արդար ծերունու հոգին.
Ճերմակ միրուքով, իր ցուպը ձեռքին,
Դառնացած, դրժգոհ մարդուց ու կյանքից,
Աղոթքը կիսատ դուրս եկավ վանքից,
Իջավ Սևանա երեսը կապույտ,

Ու քրրթմընջալով, միամիտ, անփույթ,
Էն վետ-վետ, ծրփուն ջրրերի վրրա
Ցամաք ոտներով գրնում էր ահա:
Տեսավ հրրաշքը Լենկթեմուրն ափից,
Տեսավ, սասանեց տեղը սարսափից:

Կանչեց, աղաչեց իշխանը թաթար,
Ե՛տ արի, ասավ, ե՛տ արի, արդա՛ր,
Ե՛տ արի, ասավ, ո՛վ դու աստծու մարդ:
Ետ եկավ մեր հայր Օհանը հանդարտ,
Իր ցուպը ձեռին, ջրրերի վրրով,

Ու առաջն ելավ թաթարը սիրով:
— Ի՞նչ ես ուզում դու, ո՛վ սուրբ ալևոր,
Գա՞նձ, իշխանությո՞ւն, թե կյանք փառավոր...
Քո փառքն ու գանձը հարկավոր չեն ինձ,
Իմ ժողովուրդն եմ ուզում ես քեզնից:

Ուզում եմ թողնես՝ գրնան ուր կուզեն,
Ու ազատ իրենց կյանքի ձենն ածեն
Էս լեն աշխարհքում, արևի տակին...
Ասավ սուրբ մարդը մեծ ավազակին:
Ժողովուրդ կուզե՞ս... լա՛վ, լինի էդպես:

Էս վանքովը մին ժողովուրդ տամ քեզ,
Գրնա ինձ համար աղոթք արա, ծե՛ր:
Ասավ Լենկթեմուրն ու տրվավ պատվեր,
Որ գերի հայոց ազգը մի թևից
Էն վանքը մրտնի սուրբի ետևից.

Ինչքան ժողովուրդ մրտնի էն վանքը,
Նրան է բաշխում էնքանի կյանքը:
Հրաման արավ իրեն զորքերին,
Ու բաց թողեցին հայ ազգի գերին:

Մընում է գերին, մընում մի ծերից,

Անցել է թիվը հարյուր հազարից,
Չի լրցվում սակայն հասարակ մի վանք...
Ապշում է թաթարն արմա՛նք ու զարմանք:
Թողե՛ք, կանչում է իրեն զորքերին,
Հորձանք է տալի նորից հայ գերին:

Գալիս է գերին, գալիս է նորից,
Անցել է թիվը հազար հազարից,
Չի լրցվում սակայն էն վանքը կըրկին,
Չի կանգնում հայի հոսանքն ահագին:
Երրորդ անգամ է կանչում զորքերին:

Գալիս է անցնում մընացած գերին:
Անցնում է գերին, անցնում շարեշար,
Էլ մարդ չըմնաց, գընա՛ց ինչ որ կար,
Դատարկ է սակայն վանքը տակավին...
Թեմուր զարհուրած դառնում է չորս դին.

Զարթո՞ւն եմ արդյոք, թե երազ տեսա...
Հայտնեցեք ինձ շո՛ւտ, ի՞նչ հըրաշք է սա...
Գընում են տեսնում մարդիկն իր ղըրկած
Մեր հայր Օհանը՝ աղոթքի չոքած,
Աչքերն երկընքին, միրուքն արցունքոտ.

Ով որ հայ ազգից մըտել է իր մոտ,
Իր սուրբ աղոթքով, կամքով վերինի,
Փոխել է իսկույն, դարձրել աղավնի,
Բաց պատուհանից թողել ամենքին,
Թըռցրել դեպ իրենց լեռները կըրկին,

Ու հիմի վանքում էլ չըկա ոչ ոք,
Ինքն է աղոթում մենակ, ծընկաչոք:

1912